ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՅԹՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ ԱՐԱՄԻ

ԽՂՃԻ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄՈՏԻՎՆԵՐԸ ԼԻԼԻԱՆ ՀԵԼԼՄԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ժ. 01.07 - «ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ
ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2020

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում:

Գիտական ղեկավար՝ բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Հենրիկ Անտոնի Էդոյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ բանասիրական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր
Գայանե Վիուլի Եղիազարյան

բանասիրական գիտությունների
թեկնածու, դոցենտ
Քրիստինե Հենրիկի Բեջանյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ ԳԱԱ Մանուկ Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2020թ. դեկտեմբերի 9-ին՝ ժամը 14^{30}-ին, ԵՊՀ-ում գործող ՀՀ ԲՈԿ-ի 066 մասնագիտական խորհրդի նիստում: Հասցեն՝ ք. Երևան, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ-ի Եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի մասնաշենք, 422 լսարան:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2020 թվականի հոկտեմբերի 30-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝
բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ **Ա. Վ. ԵԳԱՆՅԱՆ**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսությունը նվիրված է 20-րդ դարի ամերիկացի երևելի դրամատուրգ, սցենարիստ և մի շարք հուշագրությունների հեղինակ **Լիլիան Հելլմանի** (1905-1984) երկերում հանգուցային հիմնախնդրի՝ խղճի ու պատասխանատվության մոտիվների քննությանը:

Այս գրողի երկերը ներկայացնում են այնպիսի հիմնախնդիրներ, ինչպիսիք են մարդու հակվածությունը դեպի չարը, իշխանության ու դրամի գայթակղությունը, անհատական շահերի և սոցիալական գիտակցության երկատվածությունը: Լ. Հելլմանը բարձր արվեստով ներկայացրել է մարդկությանը բաժին ընկած ներհակ իրավիճակները, անհատի ու հասարակության բախումը և իրավամբ ձեռք բերել ամերիկացի առաջադեմ կին թատերագիր լինելու համբավը:

Ատենախոսության մեջ ամենից առաջ բացահայտվում են Լ. Հելլմանի տեղն ու դերը ժամանակի ամերիկյան գրականության մեջ: Քննարկվում են գրողի քաղաքական հայացքները, որոնք անմիջականորեն ազդել են նրա գրականության վրա: Հատուկ ուշադրություն է դարձվում գրողի ստեղծագործական կյանքի զարգացմանը, հստակեցվում են դրա շրջանակները: Լ. Հելլմանի արվեստի ինքնատիպությունը մատնանշելու և վեր հանելու նպատակով գրողի ստեղծագործական արվեստը քննվում է նրան ժամանակակից այլ գրողների զուգադրմամբ:

Աշխատանքում հատուկ քննության առարկա են դարձել Լ. Հելլմանի պիեսները: Դրանցից առանձնացվել են առավել հայտնիները («Երեխաների ժամը», «Փոքրիկ աղվեսները» և այլն): Անհրաժեշտաբար զուգահեռներ են տարվել ինչպես գրողի առանձին պիեսների, այնպես էլ դրանց ստեղծման ենթափուլերի միջև, բացահայտվել են խղճի և պատասխանատվության հիմնահարցը ժամանակակից ամերիկյան հասարակության մեջ ու դրա նկատմամբ հեղինակի վերաբերմունքը:

Դիտարկվել են նաև Լ. Հելլմանի հուշագրությունները, մասնավորապես «Անավարտ կինը», «Սրիկայի ժամանակը» և «Պենտիմենտո»-ն: Բացահայտվել են պիեսների և հուշագրությունների միջև առկա աղերսները, ինչպես նաև պարզաբանվել այն դրդապատճառները, որոնք ստիպել են գրողին անցում կատարելու գրական մի նոր ժանրի:

ԹԵՄԱՅԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Լիլիան Հելլմանի գեղագիտական հարցադրումներն ու պատկերած կերպարներից շատերն **արդիական** և ուսանելի կարող են լինել նաև մեր օրերում ու մեր հասարակության համար: Գրողի կողմից առաջ քաշված խնդիրները համամարդկային են, և դրանց տրվող ինքնատիպ լուծումներն այսօր էլ չեն կորցրել իրենց թարմությունն ու կարևորությունը: Դրանք խոր պատկերացում են

տալիս մարդկային բարդ փոխհարաբերությունների, մարդու և ըստ այդմ՝ տարբեր իրավիճակներում նրա վարքագծի մասին:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՊԱՏԱԿԸ, ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ատենախոսության ուսումնասիրության ***առարկան*** Լ. Հելլմանի ստեղծագործությունն է, մասնավորապես մարդու խղճի և պատասխանատվության մոտիվները գրողի պիեսներում ու հուշագրություններում:

Ուսումնասիրության ***նպատակն է*** համակողմանիորեն քննության առնել Լ. Հելլմանի երկերը, բացահայտել դրանցում առկա խղճի ու պատասխանատվության մոտիվները, անհատի սոցիալ-հոգեբանական, քաղաքական ու հասարակական բախումների դրսևորումները: Հիմնական նպատակից ելնելով՝ աշխատանքում առաջ են քաշվել ***գիտական*** հետևյալ ***խնդիրները***.

1. Դրամատուրգի ստեղծագործական շրջանների զարգացման համատեքստում զուգահեռներ անցկացնել նրա և իր ժամանակակիցների, այդ թվում՝ Ք. Օդեթսի, Թ. Ուիլյամսի և այլոց միջև:

2. Ներկայացնել դրամատուրգին՝ անդրադարձ կատարելով վերջինիս ստեղծագործական ինքնօրինակ մտածողությանը, բացահայտել նրա դերն ամերիկյան թատերգության զարգացման գործում:

3. Վերլուծել անհատի ըմբռնման, նրա գոյության ու ներքին բախումներից հորդող մոտեցումները, խղճի ու պատասխանատվության մոտիվները:

4. Բացահայտել անհատի ներաշխարհի դրսևորումները՝ վեր հանելով անհատի ու իրականության բախումը խնդրո առարկա պիեսներում և հուշագրություններում:

5. Անհատի էքզիստենցիալ՝ գոյաբանական վիճակների դրամայի համապատկերում քննության առնել վերջինիս ներքին հակասականության, համամարդկային և տիպիկ ամերիկյան ընդհանրությունների ու առանձնահատկությունների արտացոլումը Հելլմանի երկերի գեղարվեստական արժեհամակարգում:

Աշխատության էական խնդիրներից է եղել նաև թատերագրի աշխարհընկալման, գեղագիտական ճաշակի վերհանումը: Առանձնակի ուշադրություն է դարձվել նրա երկերի կառուցվածքային, կերպարաստեղծման ու լեզվաոճական, հնարքային զանազան խնդիրներին, մասնավորապես՝ մարդ–մարդ, մարդ–ընտանիք, մարդ-հանրույթ համատեքստում:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Ատենախոսության հիմքում դրված են վերլուծական և տիպաբանական ***մեթոդները***:

Գրողի տարբեր երկեր քննվում են համակողմանիորեն, փուլ առ փուլ՝ ըստ տվյալ գլխի նպատակադրման ու աշխատանքի առջև դրված խնդիրների: Մյուս կողմից՝ մատնանշվում է Լ. Հելլմանի և նրա ժամանակակից մյուս գրողների գործերի համեմատական վերլուծությունը:

Հաշվի են առնվել գրականագիտության և գրական քննադատության հարուստ փորձն ու գիտական վերջին նվաճումները: Անհրաժեշտաբար անդրադարձ է կատարվել ամերիկյան դրամատուրգիայի պատմության ուսումնասիրման ժամանակակից մեթոդներին և տեսական սկզբունքներին:

Պատմահամեմատական մեթոդաբանական մոտեցմամբ բացահայտվել է ամերիկյան հասարակության մեջ առկա մի շարք երևույթների էությունը, վերլուծվել են քննարկվող ժամանակաշրջանը, դրա ներքին յուրահատկությունները և վերջիններիս համարժեք գրական-գեղարվեստական մոդելները:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Լ. Հելլմանի կյանքի ու գրական ժառանգության վերաբերյալ հետազոտողների, կենսագիրների, տեսաբանների ու քննադատների կողմից գրվել են բազմաբնույթ աշխատություններ, որոնք բովանդակում են ուշարժան տվյալներ դրամատուրգի անձնական ու ստեղծագործական կյանքի մասին, տեղեկություններ են տրամադրում դարաշրջանի անցուդարձերի վերաբերյալ, ինչպես նաև տեսական, գրականագիտական, քննադատական վերլուծություններ, գրականագիտական պատկառելի ուսումնասիրություններ. դրանցից հարկ է առանձնացնել ԱՄՆ-ի 20-րդ դարի գրականության, թատրոնի ու թատերգության, գրական-քննադատության վերաբերյալ արժեքավոր աշխատություններ[1], ինչպես նաև մի շարք այլ աղբյուրներ[2], որոնք բովանդակում են տեսական ու քննադատական լրջմիտ մոտեցումներ և հսկայական կարևորություն են ունեցել ներկա հետազոտության իրականացման համար: Նշյալ աղբյուրները ներառում են 19-20-րդ դարերի եվրոպական ու ամերիկյան

---

[1] Տե՛ս **Bigsby, C. A.**, Critical Introduction to Twentieth Century American Drama. Vol. 1, 1900-1940. Cambridge; London; New York, 1982, 351 p, **Bigsby,** C. W. E., A Critical Introduction to Twentieth-Century American Drama (Volume 3, Beyond Broadway), Cambridge University Press, 1985, 485 p, **Bigsby,** C. W. E., A Critical Introduction to Twentieth-Century American Drama (Volume 2, Williams, Miller, Albee), Cambridge University Press, 1984, 364 p, **Bigsby,** C. W. E., The Cambridge History of American Theatre, Cambridge University press, 2000, 587 p.

[2] Տե՛ս **Abbotson**, S .C. W., Masterpieces of 20th-Century American Drama, Greenwood press Introduces Literary Masterpieces, 2005, 232 p, **Saddik, A.**, Contemporary American Drama (Edinburgh Critical Guides to Literature), Edinburgh University Press, 2007, 242 p, **Cardullo, B.**, American Drama/Critics: Writings and Readings, Cambridge scholars press, 2007, 270 p, **Puchner, M.**, Modern Drama (Critical concepts in literary and cultural studies), Routledge, New York, 2008, 1600 p.

գրականության ձևավորման առանձնահատկությունները, դրամայի զարգացման միտումները, ուղղությունները, դրամատուրգների ստեղծագործական, գեղագիտական աշխարհընկալման յուրահատկությունները:

Մարդկային հոգեվիճակների և ներկայացվող գրողի ստեղծագործության առանձնահատկությունների տեսանկյունից արժեքավոր աղբյուրներ են հանդիսացել նաև Հելլմանի կենսագիրների[3] և այլ հեղինակների գրքերն ու քննադատական մոտեցումները: Դրանք արտացոլում են գրողի կենսագրության, ստեղծագործական ուղու և երկերի տարբեր ասպեկտները: Ուսումնասիրված աշխատությունները պարունակում են նաև արժեքավոր տվյալներ հանրային ու անձնական կարևորագույն այն իրադարձությունների և հանգամանքների վերաբերյալ, որոնք ոգեշնչել են դրամատուրգին իր երկերն ստեղծելիս:

Արդ, իսկ ո՞րն է սույն ատենախոսության **գիտական նորույթը**: Այն մի կողմից առաջին փորձն է՝ հայ ընթերցողին հանգամանալից և մի ուսումնասիրության շրջանակներում ներկայացնելու ամերիկացի դրամատուրգի ստեղծագործությունները, որոնք պարունակում են համամարդկային ու հավերժական թեմաներ և անարդարությանը նետված մշտական մարտահրավերներ են, իսկ հուշագրությունները՝ այդ արվեստում քողարկված սեփական հուզիչ ու փոթորկալից կյանքի անձնական հաշվետվություններ, մյուս կողմից՝ ընտրված թեման՝ խղճի և պատասխանատվության հիմնախնդիրը, օտարալեզու հրապարակումներում քննվել է մասնակի՝ զանազան ուրիշ հարցադրումների առնչակցությամբ, և չի դարձել հատուկ ուսումնասիրության նյութ:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքի ***գործնական նշանակությունն*** այն է, որ այն կարող է ծառայել որպես ուսումնաօժանդակ նյութ՝ ՀՀ տարբեր բուհերի ուսանողների և դասախոսների համար: Ատենախոսությունը կարող է օգտակար լինել նաև առհասարակ ժամանակակից անգլամերիկյան գրականության մասնագետների, բուհական ծրագրերի և դասախոսությունների համար:

Ուսումնասիրության արդյունքները միտված են նաև որոշ չափով լրացնելու այն բացը, որ առկա է 20-րդ դարի ամերիկյան դրամատուրգիայի ուսումնասիրության ոլորտում մեր մշակույթի մեջ:

---

[3] Տե՛ս **Rollyson, C.,** Lillian Hellman: Her Legend and Her Legacy, St Martins Pr, 1988, 613 p, **Rollyson, C.,** Critical insights: Lillian Hellman, The City University of New York, 2011 (1 volume), 360 p, **Kessler-Harris, A.**, A Difficult Woman: The Challenging Life and Times of Lillian Hellman, Bloomsbury Publishing, 2012, 448 p.

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԸ

Աշխատանքը քննարկել ու հրապարակային պաշտպանության է երաշխավորել ԵՊՀ-ի եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի արտասահմանյան գրականության ամբիոնը:

Ատենախոսության հիմնադրույթները հրապարակվել են ՀՀ ԲՈԿ-ի կանոնադրությամբ հաստատված գիտական պարբերականներում, ինչպես նաև օտարերկրյա հրատարակություններում:

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Այստեղ հիմնավորվում են թեմայի ընտրությունը, դրա արդիականությունն ու գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, շեշտվում են ուսումնասիրության նպատակներն ու խնդիրները, բացահայտվում են աշխատանքի մեթոդաբանական բազան, հարցի պատմությունը և թեմային առնչվող գրականությունը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

20-ՐԴ ԴԱՐԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԼԻԼԻԱՆ ՀԵԼԼՄԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Այս գլխում հիմնականում քննարկվում են Լ. Հելլմանի քաղաքական հայացքները, որոնք անմիջականորեն ազդել են նրա գրականության վրա: Գրողը, ապրելով ու ստեղծագործելով 20-րդ դարում, հանդես է եկել ոչ միայն իբրև արվեստագետ, այլև հանրային–քաղաքական եռանդուն գործիչ, ինչի արդյունքում ենթարկվել է հալածանքների: Ծնված լինելով Նոր Օռլեանում՝ նա թե՛ խառնվածքով և թե՛ արվեստով միավորում էր երկրի Հյուսիսն ու Հարավը:

Հելլմանն ուներ հստակ դիրքորոշում ժամանակի հանրային-քաղաքական անցուդարձի վերաբերյալ: «Նա ամբողջովին գիտակցում էր իր ժամանակի քաղաքական իրադարձությունների դրամատիկ զարգացումները և դրամաները

գրում էր՝ սեփական փորձից ելնելով»[4],- իրավացիորեն նկատում է Ջ. Ռիչարդը: Գրողը, սակայն, չէր սիրում քաղաքական դրաման՝ իբրև այդպիսին. նա նախընտրում էր վեր հանել անհատի հիմնախնդիրը և ոչ թե կառչել քաղաքական տիրող իրավիճակից՝ այն դարձնելով ստեղծագործության նյութ:

Հելլմանը գրել է քաղաքական հինգ դրամա, որոնցից երեքը («Կգա օրը», «Հսկում Հռենոսի վրա», «Փոթորկող քամին») քննում են քաղաքական որևէ գաղափարախոսություն՝ կոմունիզմ, նացիզմ, ֆաշիզմ և այլն, իսկ երկուսը («Մոնսերատ», «Արտույտը») անդրադառնում են քաղաքական կոնկրետ անհատների: Չկա հստակ վկայություն՝ կապված Հելլմանի կուսակցական պատկանելության հետ: Նա աջակցում էր մերթ այս, մերթ այն ուժերին, սակայն միշտ ընդդիմադիր էր, ինչի արդյունքում էլ շարունակ հսկվում էր՝ գտնվելով կառավարական ուժերի ուշադրության կենտրոնում: 1940 թվականի հունվարի 9-ին, նկատի ունենալով ֆաշիզմի տարածումը Եվրոպայում և վախենալով քաղաքական համանման զարգացումներից ԱՄՆ-ում, նա Ամերիկյան գրավաճառների միավորման մի ճաշկերույթի ժամանակ ասում է հետևյալը. «Ես գրող եմ և նաև հրեա: Ուզում եմ միանգամայն վստահ լինել, որ կշարունակեմ գրող լինել, և եթե ես կամենամ ասել, որ ագահությունը վատ է, իսկ հալածանքը՝ է՛լ ավելի վատ, կարող եմ դա անել՝ առանց պիտակավորվելով չարակամների կողմից, որոնք ապրում են հենց դրանով: Ես նաև ուզում եմ ի վիճակի լինել շարունակ կրկնելու, որ ես հրեա եմ՝ առանց վախենալու, որ ինձ անուն կկպցնեն, կյանքս կավարտեմ բանտախցում կամ էլ ինձ կարգելվի գիշերով քայլել փողոցով»[5]:

Հելլմանն ըստ էության սոցիալական դրամայի իսկական ներկայացուցիչ էր: Նրա պիեսներում անհատը հանդես է գալիս ոչ թե առանձին, այլ հասարակության մեջ, որը հավասարապես կրում է նրա գործած սխալների մեղքն ու պատասխանատվությունը: Տվյալ հասարակությունն է ծնել անհատին, և նա ինչ–որ առումով ոչ թե այդ հասարակության խարանն է, այլ զոհը:

Հանուն ի՞նչ գաղափարների էր պայքարում գրողը: Գիտակցելով մարդ-հասարակություն սերտ կապը՝ Հելլմանը կոչ էր անում հասարակության միջից դուրս բերել անմարդկային սովորույթներն ու հակումները՝ անհանդուրժողականությունը, անարդարությունը, խղճի բացակայությունը և այլն: Այս մոտեցման մեջ թերևս մեծ դեր ուներ գրողի ազգային պատկանելիությունը: Բացի այդ՝ Հելլմանը ժամանակի ֆեմինիստական շարժման ջատագովներից ու ամենավառ ներկայացուցիչներից էր. նա պայքարում էր հանուն տղամարդու և կնոջ իրավահավասարության, հասարակության մեջ կնոջ դերի մեծացման:

Հելլմանն Օդեթսի հետ մեկտեղ գրական ասպարեզ է իջնում 1930-ականներին: Գրական մեկնարկը տրվում է «Երեխաների ժամը» (1934) և «Փոքրիկ աղ-

---

[4] **Richard G.**, A History of American Literature, Wiley –Blackwell, 2011, p 105.

[5] **Wright, W.**, C., Lillian Hellman: The image, the woman, New York, 1986, p 168.

վեսներ» (1939) պիեսներով: Երկուսն էլ ունենում են հաջողություն՝ թե՛ քննադատության և թե՛ իբրև գրքի սպառման տեսակետից, իսկ «Երեխաների ժամը» առաջադրվում է Պուլիցերյան մրցանակի, և Հելլմանն ավելի քան երկու տասնամյակ շարունակում է իր գործունեությունը թատրոնում:

Ի տարբերություն Օդեթսի՝ Հելլմանը չէր սիրում քաղաքական դրաման՝ իբրև այդպիսին, քանի որ «ուզում էր, որ իր դրամաները գնահատվեին ոչ թե համաձայն այն աստիճանի, որով դրանք գիտակցաբար լուսաբանում էին ժամանակի խնդիրները, այլ իբրև արվեստի գործեր, որ խտացնում էին հասարակության հիմնահարցերը և ժամանակի մասնավոր լարվածությունը»[6]: Ուրիշ խոսքով՝ Հելլմանն ամեն կերպ փորձում էր արվեստը վեր բարձրացնել քաղաքականությունից: Եվ, արդարև, հելլմանյան արվեստը հնարավորինս զերծ էր քաղաքական ենթատեքստից ու բևեռացվածությունից: Դրանով էլ նրա քաղաքական դրամաները տարբերվում են Քլիֆորդ Օդեթսի և Ջոն Լաուսոնի դրամաներից, որոնք ավելի շատ իրենց ժամանակի քաղաքական մեկնաբաններն ու քարոզիչներն էին, քան զուտ արվեստագետներ:

Հելլմանի համար առաջին պիեսը միայն սկիզբ էր: 1930-ականների ընթացքում նա շարունակում է գրել թե՛ հաջողված և թե՛ պակաս հաջող պիեսներ: Մյուս նշանակալից պիեսը՝ «Փոքրիկ աղվեսները», նրա չորս թատերգություններից առաջինն է, ուր հեղինակն ուսումնասիրում է սեփական շահի և պատասխանատվության միջև առկա բախումը: 1941-ին նա ավարտում է իր ամենաքաղաքական պիեսը՝ «Հսկում Հռենոսի վրա», որը Երկրորդ աշխարհամարտի ժամանակ հականացիստական շարժման մեջ ներգրավված ընտանիքի մասին է: 1950-ականներին Հելլմանը ցուցաբերում է մի նոր հմտություն՝ անցում կատարելով Չեխովի թատերգության նուրբ կառուցվածքին («Աշնանային այգի», 1951): Այս դրաման միջին տարիքի մարդկանց պարտությունների, հուսալքությունների ու մարող հույսերի պատկերումն է: Հաջորդ՝ «Խաղալիքները ձեղնահարկում»-ը (1960), շատ գրաքննադատներ համարում են նրա լավագույն երկը: 1960-ականների սկզբին Հելլմանը սկսում է խուսափել թատերգություն գրելուց ու կենտրոնանում է հուշագրությունների վրա:

Ատենախոսության առաջին գլխում նաև համեմատվել են Օդեթսի ու Հելլմանի երկերը՝ «Ձախլիկին սպասելիս» և «Երեխաների ժամը» պիեսները: Դրանց տիպաբանական դիտարկումները փաստում են, որ այս թատերագիրների երկերն անդրադառնում են հասարակության խորքային փոփոխություններին, ինչպես նաև տասնամյակի մշակութային պատմության զարգացմանը: Երկու թատերագիրներն էլ օգտագործում են հանրության կրած ազդեցությունները, որպեսզի ցույց տան իրենց պիեսներում գործող կերպարների զարգացումը: Երբ ժամանակի ընթացքում ԱՄՆ-ում տեղի են ունենում էական փոփոխություններ, փոխվում է նաև նրանց պիեսների կերպարների ունեցած դերը: Կանանց

[6] **Richard G.**, A History of American Literature, Wiley–Blackwell, 2011, p 107.

կերպարակերտման խնդրում Հելլմանը մի քանի քայլ առաջ էր Օդեթսից: «Երեխաների ժամ»-ում նա ներկայացնում է կանանց դերի վերաբերյալ հետաքրքիր տեսակետ: Համարյա բոլոր կերպարները կանայք են, որն անսովոր էր 1930-ականների պիեսի համար: Մինչ Հելլմանը տիպաբանորեն կանացի կերպարները կատարում էին աջակցող դեր, տղամարդիկ ունեին առաջատար դեր՝ այնքան հոգեհարազատ Օդեթսի գրելաոճին:

Աշխատանքի առաջին գլխում զանց չեն առնվել նաև Թեննեսի Ուիլյամս-Լիլիան Հելլման զուգահեռումները: Նկատվել է, որ Հելլմանն իր լավագույն երկերն ստեղծել է այն ժամանակ, երբ սոցիալական ռեալիզմն օրվա հրամայականն էր: Եվ այս երկու գրողներն էլ իրենց ստեղծագործության թատերաբեմը դարձնում էին երկրի Հարավը՝ պատկերելով պատմաքաղաքական ստեղծված իրավիճակն ու այդ պայմաններում անհատի կայացումն ու անգամ մարդկային որակները պահելու դժվարությունները:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՄԱՐԴՈՒ ՊՐՈԲԼԵՄԱՏԻԿԱՆ Լ. ՀԵԼԼՄԱՆԻ ՊԻԵՍՆԵՐՈՒՄ

Ատենախոսության երկրորդ գլխում հանգամանալից ուսումնասիրվում են Հելլմանի պիեսները: Գլուխը տրոհված է երկու ենթագլուխների, որոնցից առաջինը քննում է գրողի վաղ շրջանի պիեսները («Երեխաների ժամը», «Փոքրիկ աղվեսները»), իսկ երկրորդում բացահայտվում են Հելլմանի՝ հետպատերազմյան շրջանում գրված պիեսները («Հսկում Հռենոսի վրա», «Աշնանային այգին», «Խաղալիքները ձեղնահարկում»)՝ իրենց ինքնատիպությամբ հանդերձ: Տարվում են զուգահեռներ ինչպես գրողի առանձին պիեսների, այնպես էլ դրանց ստեղծման ենթափուլերի միջև: Ամփոփվում են այն նմանություններն ու առանձնահատկությունները, որոնք բնորոշ են Հելլմանի պիեսներին: Ամբողջ գլխում դիտարկվում է խղճի և պատասխանատվության հիմնահարցն ամերիկյան հասարակության մեջ ու դրա նկատմամբ հեղինակի վերաբերմունքը:

Հելլմանի դրամաներն իրենց կառուցվածքով առանձնանում են նրանով, որ կազմված են երեք և ոչ թե հինգ արարներից, ինչպես այլ դրամատուրգների դեպքում: Սեղմ ծավալի սահմաններում, սակայն, գրողին հաջողվում է հասնել իր առջև դրված հիմնախնդրի ամբողջական հանգուցալուծմանը. առաջին արարում հեղինակը բացում է տվյալ դրամայի հիմնախնդիրը, ապա զարգացնում այն երկրորդում, իսկ երրորդում՝ հասնում գագաթնակետին: Բացի համոզիչ կերպարներ կերտելուց՝ Հելլմանը նաև պատկերակերտման վարպետ է: Նրա դրամաներում խնամքով հաշվի են առնված կատարվող գործողությունների թե՛ տարածությունը, թե՛ ժամանակը: Յուրաքանչյուր տեսարանից առաջ հանգամանորեն ներկայացվում են դրա իրականացման բոլոր մանրամասները. գրողի

ուշադրության կենտրոնում են բեմական դեկորներից մինչև հերոսների հագուստն ու արդուզարդը: Հերոսների խոսքից առաջ հաճախ մեկ դիպուկ արտահայտությամբ այնպես է նկարագրվում դրա արտաբերման եղանակը, որ դրանից հետո ասված խոսքը թվում է՝ եթե ոչ ավելորդ, ապա գոնե սպասելի:

Գրողը հիմնականում չի էլ փորձում ստեղծագործությունը ծանրաբեռնել ավելորդ կերպարներով: Խոր հոգեբանությամբ օժտված այդ կերպարներն ապրում են անգամ կոնտեքստից դուրս: «Երեխաների ժամը» պիեսում, օրինակ, մարդկային խիղճն ու պատասխանատվությունը կուլ են գնում հերոսուհու եսասիրությանն ու կամակորությանը: Այս վերջին հատկանիշներն այնքան ուժեղ են արտահայտված նրա մեջ, որ նա մինչև վերջ առաջ է տանում իր սև գործը՝ չխղճալով իր ուսուցչուհիներին իբրև մարդ և խուսափելով իր հնչեցրած ստի համար հասանելիք պատասխանատվությունից:

«Երեխաների ժամը» դրամայի նյութը ժամանակի համար համարձակ համարվող թեմաներից մեկն էր՝ սեռական տարբերվող կողմնորոշումը: Գրողը, սակայն, չի պախարակում այդ երևույթը՝ որպես այդպիսին, որքան դատապարտում է այն փաստը, որ դա կարող է բացասական ազդեցություն ունենալ հասարակության մեջ կնոջ տեղի ու դերի վրա: Ըստ հեղինակի՝ մարդն առհասարակ և կինը մասնավորապես իրավունք ունեն կրոնական, սեռական, քաղաքական և այնպիսի այլ կողմնորոշումների, ինչպիսին իրենք են նախընտրում: Եվ ցավալի է ոչ թե այդ ընտրության անսովորությունն ու տարօրինակ բնույթը, այլ հասարակության կողմից դրա կուրորեն դատապարտումը:

Այս պիեսում մարդկային խիղճն ու պատասխանատվությունը կուլ են գնում հերոսուհու՝ Մերիի եսասիրությանն ու կամակորությանը: Վերջին հատկանիշներն այնքան ուժեղ են արտահայտված հերոսուհու մեջ, որ նա մինչև վերջ առաջ է տանում իր սև գործը՝ չխղճալով իր ուսուցչուհիներին իբրև մարդ և խուսափելով իր հնչեցրած ստի համար հասանելիք պատասխանատվությունից:

«Փոքրիկ աղվեսները» դրամայում յուրօրինակ զարգացում ու մեկնաբանություն են ստանում մարդկային խղճի ու պատասխանատվության հակադրումը հերոսների չարամետ հակումներին: Հանուն սեփական շահի ու առաջընթացի նրանք ոչնչի առջև կանգ չեն առնի և պատրաստ են անգամ իրենց հարազատին մղել կործանման:

Դրամայի վերնագիրը հեղինակը վերցրել է Սողոմոնի առակներից: «Աղվեսներն» այս դեպքում Հուբբարդների ընտանիքն է, որի անդամները՝ Ռեջինան, Բենը և Օսկարը, չար են ու ագրեսիվ: Սակայն առակն ասում է, որ սրանց հաջորդելու են ավելի վատերը: Ագահությունն այս դրամայում ծնունդ է առել մի ուրիշ կարևոր խնդրից՝ սեփականության նկատմամբ դստեր և որդու անիրավահավասարության փաստից: Հերոսները մնում են հասարակության մի մասը, հասարակություն, որտեղ նրանք ապրում են անտարբեր ու թշվառ՝ որպես մարդկային կյանքի իրական ներկայացուցիչներ, հետաքրքրաշարժ իրենց սարսափի մեջ՝ որպես մարդակերպ գազաններ: Արտաքին ազդեցությունները մեծ ուժով

աշխատել են նրանց վրա: Բայց բնության ուժը հակասում է իրենց ցանկություններին: Աշխարհը նրանց ստիպում է գործել այնպես, ինչպես դրա օրենքներն են գործում: Երբեմն նրանք ոչ ոք չունեն կյանքում, բացի հենց իրենցից, և ստիպված են հաշվետու լինել իրենց խեղված խղճի առաջ: Թե՛ Ռեջինայի և թե՛ նրա եղբայրների մեջ մարդկային խիղճն ասես իսպառ բացակայում է. հանուն սեփական շահի ու առաջընթացի նրանք ոչնչի առաջ կանգ չեն առնի և պատրաստ են անգամ իրենց հարազատին մղել կործանման: Եվ միայն Ալեքսանդրան է, որ օժտված է թե՛ մեկով և թե՛ մյուսով ու ոչ մի կերպ չի համակերպվում իր շրջապատի վարք ու բարքին և կործանարար արժեքներին:

Աշխատության երկրորդ գլխի երկրորդ ենթագլխում («Անհատի հոգու խեղաթյուրումը Հելլմանի հետպատերազմյան շրջանի պիեսներում») նկատվում է, որ պատերազմի անմիջական ազդեցությունը կրում են ոչ միայն նրա մասնակիցները, այլև հետագա մի քանի սերունդներ: Պատերազմի բերած ավերածությունը, ցավն ու կորուստը հնարավոր չէ երկար ժամանակ մոռանալ («Անտառի մյուս կողմում», «Աշնանային այգին», «Խաղալիքները ձեղնահարկում», «Հսկում Հռենոսի վրա»): Իբրև իր ժամանակի իսկական զարկերակ՝ Հելլմանն անմիջապես հասկանում է պահի լրջությունը և իր պայքարն ուղղում այդ չարիքի դեմ: Նրա հետպատերազմյան հերոսը կարող է և ուղղակիորեն չակնարկել իր մենակության, ցավի ու տխրության պատճառների մասին, բայց ստեղծագործության ենթատեքստից հասկացվում է, որ այդ ամենի պատճառը պատերազմն է:

Երկրորդ գլխում եզրակացվում է, որ Լ. Հելլմանը չի փորձում կենտրոնանալ քաղաքական որևէ ենթատեքստի կամ անցուդարձի վրա. նրա նպատակը հոգեբանական խորք ունեցող և պատճառաբանված կերպարներն են, որոնք իրենց դարի ու ժամանակի վառ ներկայացուցիչներն են: Քաղաքական կամ սոցիալ-տնտեսական ենթատեքստը զուտ միտված է ժամանակի ամերիկացու կերպարակերտմանը:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԱՆՀԱՏԻ ԷՔԶԻՍՏԵՆՑԻԱԼ ՎԻՃԱԿՆԵՐԻ ԴՐԱՄԱՆ Լ. ՀԵԼԼՄԱՆԻ ՀՈՒՇԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ատենախոսության այս գլխում ուսումնասիրվում են Հելլմանի հուշագրությունները, մասնավորապես «Անավարտ կինը», «Սրիկայի ժամանակը» և «Պենտիմենտո»-ն: Տրվում է կապը գրողի պիեսների և հուշագրությունների միջև, ինչպես նաև պարզաբանվում են այն դրդապատճառները, որոնք ստիպում են գրողին անցում կատարելու գրական մի նոր ժանրի:

Գլխի շրջանակներում դիտարկվում են մի շարք այնպիսի հարցեր, ինչպիսիք են պիեսից հուշագրության անցման հելլմանյան դրդապատճառները,

հուշագրությունների առանձնահատկությունն ու ինքնատիպությունը՝ իբրև ժանր, վերջինիս հաղթահարման մակարդակը գրողի կողմից և այլն: Թեմատիկ միասնականությունից ելնելով՝ այս գլուխը նպատակահարմար չի գտնվել բաժանել ենթագլուխների:

Մասնավորապես նկատվում է, որ Հելլմանն իր հուշագրություններում ներառում է ինչպես հետահայաց պատում, այնպես էլ փաստագրական հարուստ վկայություն, ինչը թույլ է տալիս նրա ընթերցողին նկատի ունենալու այդ երկուսի հարաբերակցությունը: Հելլմանի հուշագրություններն ըստ էության զերծ չեն պատմականությունից ու իրական փաստերից, որը մեծացնում է դրանց գրական-պատմական արժեքը: Ինչպես ցանկացած այլ հուշագիր, Հելլմանը ևս անդրադառնում է պատմական վավերական անցքերին՝ իբրև արժեքավոր վկայությունների: Նա դրանք խնամքով զետեղում է իր հուշագրություններում և պատրաստ է երաշխավորել իր կողմից ներկայացված ցանկացած տեղեկության համար: Հելլմանի հուշագրություններն ըստ էության արտացոլում են նրա կենսագրությունը՝ հիմնված փաստագրական աղբյուրների վրա: Սա գրողի յուրօրինակ ռազմավարությունն էր, որով նա, իր ինքնակենսագրական անցքերը ներկայացնելուց բացի, վերլուծում է նաև ժամանակակից անհատի գիտակցությունը: Փաստորեն, ի տարբերություն համընդհանուր տենդենցի, ըստ որի՝ ինքնակենսագրական նյութը հենվում էր առավելապես նամակների, հեռագրերի, հարցազրույցների վրա, Հելլմանի դեպքում նման առանցք է հանդիսանում պատմաքաղաքական ճշմարիտ վկայությունը:

1969-ին Հելլմանը տպագրում է իր «Անավարտ կինը» հուշագրությունը՝ այն երեք առանցքային հուշագրություններից առաջինը, որն առնչվում է նրա սոցիալական, քաղաքական և արվեստագետի կյանքին: Այս գրքում առկա են էսքիզներ գրական այնպիսի գործիչների մասին, ինչպիսիք են Էռնեստ Հեմինգուեյն ու Դորոթի Փարքերը, ինչպես նաև հուզիչ տուրք է մատուցվում Համմեթին, որը վախճանվել էր 1961-ին: Սրան չորս տարի անց հաջորդում է «Պենտիմենտո. դիմանկարների գիրքը» հուշագրությունը, որում Հելլմանը վերստին ներկայացնում է զավեշտալի պատմություններ ինչպես զանազան մարդկանց մասին, այնպես էլ իր կյանքի տարբեր ժամանակահատվածների իրադարձությունները: 1976-ին Հելլմանը գրում է «Սրիկայի ժամանակը». այն ժամանակագրական կարգով ներկայացնում է հեղինակի քաղաքական գործունեությունն ու այն իրադարձությունների մանրամասն նկարագրությունը, որոնք հանգեցնում են ՀԱԱԿ-ի առաջ նրա հայտնվելուն:

Այս երեք հուշագրությունները բացահայտում են ուժեղ և հաջողակ կնոջը, պատկերում նրա կյանքը: Դրանց հերոսները կանայք են, որոնք դիմակայում են անարդար կառավարությանը և դրանով հանդերձ պահպանում իրենց արժանապատվությունն ու արվեստագետի հոգին: Այս գրքերը ֆեմինիստական շարժման իսկական ուղեցույցներ են:

«Անավարտ կինը» հուշագրություն է, ոչ թե ինքնակենսագրություն: Հելլմանի դեպքում հստակեցումն անհրաժեշտ է, քանի որ նա չի հավակնում ներկայացնել իր կյանքի կանոնակարգված, մշակված տարեգրությունը: Փոխարենը նա վերհիշում է այն իրադարձությունները, որոնք ձևավորել են իր բնավորությունը, երբեմն դրանք ներկայացվում են ժամանակագրական կարգով, բայց շատ հաճախ նա հակված է ժամանակից առաջ ընկնելուն կամ հետ գնալ՝ անդրադառնալու համար կյանքի մի քանի միջադեպերին: Այստեղ նա ներառում է ավանդական ինքնակենսագրական ժանրի մի քանի տարրեր, օրինակ, իր ընտանիքի ծագումն ու պատմությունը, բայց մերժում է հետևողական լինելը: «Անավարտ կնոջ» առանձին հատվածներն ընդմիջվում են օրագրերից բերված մեջբերումներով, որոնք նա գրել էր իր հուշագրությունը սկսելուց շատ տարիներ առաջ, այնպես որ գիրքն անգամ կայուն պատում չէ. ընդհակառակը, այն բաղկացած է Հելլմանի կյանքի տարանջատված ոլորտներից:

«Անավարտ կինը», որը 1969-ին ինքնակենսագրական ժանրի համար արժանացել է Ազգային գիրք մրցանակին, նրա ինքնակենսագրական եռագրության առաջին հուշագրությունն է (մյուս երկուսը «Պենտիմենտո. դիմանկարների գիրք» և «Սրիկայի ժամանակը» երկերն են): Հեղինակն այնտեղ պատկերում է մի կնոջ, որը ողնաշարի փոխարեն «պողպատե ձող» էր կրում, կին, որն ունի սթափ ազատություն կարծիքների հարցում, չի գնում փոխզիջման և ոչ էլ քծնում է քաղաքական, ռազմական և գրական վերնախավի առաջ, որին նա հանդիպում է, և որը, հանուն իր «ջնջոցների», կնոջից ակնկալում է երկչոտ վերաբերմունք: Բայց դա այն է, ինչը կինը երբեք չէր կատարում, քանի որ նման էր Լիլիան Հելլմանին, որն իրեն ուղղված հարցին՝ «Դուք ինչի՞ց եք ստեղծված, Լի՛լի» սառնորեն պատասխանում է. «Բաղադրիչ համեմունքից և ոչ մի լավ բանից»[7]: Միմյանց սոսնձված այս հիշողությունների «խոստովանումն» ու ամսագրային հոյակապ գրառումներն առկայծում են հանգիստ, կենտրոնացված արտացոլումներով և ինքնագնահատմամբ:

Հելլմանը 1972-ին տպագրում է «Պենտիմենտոն», 1976-ին՝ «Սրիկայի ժամանակը» և 1980-ին՝ «Միգուցե»-ն: Ինչպես և «Անավարտ կին»-ը, այս գրքերը ևս հուշագրություններ են, ոչ թե ինքնակենսագրություններ: Այսինքն՝ յուրաքանչյուր գրքում Հելլմանը կենտրոնանում է իր կյանքի կարևորագույն ժամանակահատվածների վրա. իր վկայությունը Ներկայացուցիչների պալատի ամերիկյան գործերի հանձնաժողովի առաջ, ավելի շատ դրվագներ իր մանկությունից, իր պիեսների ստեղծումը, Հոլիվուդում անցկացրած իր տարիները, բայց չէր ներկայացնում իր անձնական և քաղաքական առաջընթացի մանրամասն ժամանակագրությունը կամ բացատրությունը:

---

[7] **Hellman, L.**, An Unfinished Woman, Back Bay Books, 1999, p 103.

«Պենտիմենտո»-ն, որ կիրառում է «Անավարտ կնոջ» վերջին երեք գլուխների դիմանկարային ձևաչափերը, անվերապահորեն համարվում է գեղարվեստական բարձր որակներ ունեցող ստեղծագործություն, հաջողված մի գործ և արժանանում է ժամանակակիցների հավանությանն ու բարձր գնահատանքին: Այն հեղինակի վերհուշերի ամբողջությունն է այն մարդկանց մասին, որոնք ազդեցություն են ունեցել նրա կյանքի վրա և մնայուն հետք թողել վերջինիս հիշողություններում:

Հեղինակի հաջորդ երկու՝ «Սրիկայի ժամանակը» և «Միգուցե. մի պատմություն» հուշագրությունները, նորովի են ներկայացնում հուշագրության ժանրը: Դրանքծագործությունները լրացնում են այն բացը, որ գրողը չէր հասցրել նախորդ երկուսի իր ասելիքում: Թեև նշվածներից երկրորդ հուշագրությունը շարադրված է Հելլմանի անունից, բայց և այնպես այն քիչ ընդհանրություններ ունի գրողի կյանքի, ինչպես նաև պատմական ռեալ անցքերի ու իրողությունների հետ: Այն գրողի հուշերի ամբողջությունն է իր հիշողությունների մեկ այլ շերտի մասին:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

Առաջադրված հիմնախնդրի ուսումնասիրության ընթացքում եկել ենք հետևյալ եզրակացությունների.

1. Ամերիկյան դրաման բուռն զարգացում է ապրում 20-րդ դարի 30-60-ականներին: Նշյալ դարում դրամայի նոր՝ մոդեռնիստական շարժումը, սկիզբ է առնում սոցիումի թանձր շեշտադրումներով:

2. Երբ նկատվում է սոցիալական իրականության արժևորում, անհատի դերը՝ որպես անկախ, ռացիոնալ և նպատակասլաց կերպարի, մթագնում է: Այդ ժամանակ մարդը վերածվում է օտար, շրջապատից առանձնացած, լքված ու խուճապահար էակի, որի մեջ իրար են բախվում խղճի ու պատասխանատվության ուրույն զգացումները: Դրանք տեղ են գտնում ու գեղարվեստական մարմնավորում ստանում հիշյալ ժամանակաշրջանի դրամատուրգների պիեսներում՝ դրսևորվելով նրանց ստեղծագործական և աշխարհայացքային առանձնահատկությունների համատեքստում:

3. Լիլիան Հելլմանն անմիջական արգասիքն ու ներկայացուցիչն էր երկրի Հյուսիսի ու Հարավի: Ծնված լինելով Նոր Օռլեանում՝ նա իր մանկության մեծ մասն անցկացնում է հարազատների հետ այն բանից հետո, երբ ծնողները թողնում են հինգամյա աղջնակին ու տեղափոխվում Նյու Յորք: Այս հակասական ու մեկուսի մանկությունը հետագայում խոր ազդեցություն է թողնում գրողի աշխարհայացքի ու ստեղծագործության վրա՝ պայմանավորելով նրա խառնվածքը: Գրողի կայացման վրա մեծ ազդեցություն է ունենում նրա ամուսնու՝ Արթուր Քոբերի

հետ Հոլիվուդ ընկնելն ու Դաշիել Համեթթի հետ ծանոթությունը, որը համոզում է ոչ այնքան հաջողված արձակագրին դառնալ դրամատուրգ:

4. Հելլմանի վաղ շրջանի պիեսների գնահատումը նրան կանգնեցնում է 19-րդ դարի ավանդական դրամատուրգների՝ Անտոն Չեխովի և Հենրիկ Իբսենի կողքին, մինչդեռ ավելի ուշ շրջանի երկերի քննությունը նրան առավել հաճախ պատկերում է այնպիսի ժամանակակից դրամատուրգների շարքում, ինչպիսին են Բերթոլդ Բրեխտը, Յուջին Օ' Նիլը, Արթուր Միլլերը և Թեննեսի Ուիլյամսը:

5. Հելլմանը 20-րդ դարի ամերիկյան այն դրամատուրգներից էր, որն զգում էր ժամանակի իրական եռուզեռը, տեսնում ու գնահատում հանրային-քաղաքական իրական անցքերն ու անում ճիշտ դիտարկումներ: Այդ դիտարկումները հետագայում դառնում էին գեղարվեստական երկեր: Հելլմանն արծարծում էր ժամանակին արդիական ու ազդեցիկ բազմաթիվ խնդիրներ՝ նոր որակի հասցնելով սոցիալական դրաման:

6. Հելլմանի և նրա ժամանակի երկու այլ դրամատուրգների՝ Օդեթսի և Ուիլյամսի արվեստների քննությունը վեր է հանում բազմաթիվ տարբերություններ: Եթե վերջիններս հանդես էին գալիս իբրև ժամանակի սոցիալ-քաղաքական մտքի ու անցուդարձի պարզ քարոզիչներ, ապա Հելլմանի համար քաղաքական ենթատեքստը երկրորդական էր:

7. Հելլմանի երկերում մի յուրահատուկ տեղ ունի ժամանակի ամերիկուհին՝ իր խնդիրներով ու ինքնատիպությամբ: Դառնալով ֆեմինիստական պայքարի առաջամարտիկներ՝ այս կանայք հավասարը հավասարի պես պայքարում են տղամարդկանց դեմ իրենց իրավունքների վերականգնման համար:

8. Ուժեղի ու թույլի, կնոջ ու տղամարդու, ազնիվի ու անազնիվի պայքարում 20-րդ դարի ամերիկյան հասարակության մեջ օրհասական էին խղճի և պատասխանատվության հարցադրումները, որոնք շատ հաճախ էին ոտնահարվում: Հելլմանն իր պիեսներում և ապա նաև հուշագրություններում, ի թիվս իր ժամանակի այլ էական հիմնահարցերի, անդրադառնում է նաև դրանց խարխլման հետևանքով ստեղծվող անմարդկային վիճակներին:

9. Լիլիան Հելլմանի դրամաների զուգահեռ քննությունը ցույց է տալիս, որ դրանցում կան և՛ ընդհանրություններ, և՛ տարբերություններ: Բոլոր դրամաները կազմված են երեք արարներից՝ հակադրվելով ավանդական հինգին: Մինչ «Աշնանային այգին» գրված վեց ստեղծագործություններն սկսվում են որևէ խնդրի առաջքաշումով: «Երեխաների ժամը» և «Փոքրիկ աղվեսները» դրամաներում գործողությունն առաջ է տանում հիմնական գաղափարը, որը դրվում է ստեղծագործության հենց սկզբից: Հելլմանի մի շարք երկեր կառուցված են կերպարային հակադիր բևեռների վրա: «Երեխաների ժամը» դրամայում կշեռքի զույգ նժարներին են դրվում սուտն ու ճշմարտությունը, մեղադրանքն ու արդարացումը: «Փոքրիկ աղվեսները» ստեղծագործության մեջ հակադրության բևեռներն են մարդկային ագահությունն ու արդարության պահանջը:

10. Մի շարք երկերում Հելլմանն ընդհանրություն է ցուցաբերում անգամ վերնագրի ընտրության հարցում: «Փոթորկող քամին», «Անտառի մյուս կողմում», «Աշնանային այգին». սրանք վերնագրեր են, որոնցում ընդգծվում է մարդկային գոյության բնական, բնությունից եկող գաղափարը:

11. Հելլմանի պիեսներից յուրաքանչյուրն անդրադառնում է որևէ հրատապ խնդրի: Ընդհանուր թեման, սակայն, մարդն է՝ 20-րդ դարի ամերիկացին, որն անմիջականորեն իր վրա է զգում ժամանակի հակասական հանրային–քաղաքական իրավիճակի ազդեցությունը: Ներկայացնելով այդ դարի ամերիկացու տիպաժային կերպարներ՝ գրողը վերջնական արդյունքում ստեղծում է իր ժամանակի ամերիկացու ամբողջական և համահավաք կերպարը:

12. Հելլմանի հուշագրությունները շարունակում են գրողի գաղափարախոսությունն ու ասելիքը, լրացնում այն բացն ու չասվածը, որ հնարավոր չէր եղել պիեսի ընձեռած սահմանափակ ծավալի պայմաններում: Դրանք ուժեղ, հաջողակ կնոջ կյանքի հուզիչ ուսումնասիրություններ էին, մի կնոջ կյանքի, որը դիմակայել էր անարդար կառավարությանը և ունակ էր պահպանելու իր արժանապատվությունն ու գեղագիտական ընկալումը: Չնայած այս գրքերը քննադատվում էին ոչ ճշմարտացի լինելու համար, բայց դրանք արժեքավոր էին ոչ միայն ժամանակաշրջանի գեղագիտական բացառիկ ու հուզիչ պատկերումներով, այլև իրենց բնույթով, որը կապվում էր ֆեմինիստական շարժման սկզբնավորման հետ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՐՈՒՅԹՆԵՐԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ.

1. Ամերիկյան դրամայի գենեզիսը և էվոլյուցիան // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում (Գիտական հանդես), Երևան, ԵՊՀ հրատ., 2017, 1 (22), էջ 245- 254:
2. Լիլիան Հելլմանի դրամաների սոցիալ-բարոյական ուղղվածությունը // «Կանթեղ», Երևան, «Ասողիկ» հրատ., 2018, 1 (74), էջ 29-34:
3. Ժամանակի մշակութային միջավայրը և անձնական աշխարհը Լիլիան Հելլմանի «Անավարտ կինը» հուշագրության մեջ // «Կանթեղ», Երևան, «Ասողիկ» հրատ., 2018, 1 (74), էջ 35-44:
4. Անհատի դրաման Լիլիան Հելլմանի «Պենտիմենտո»՝ «Դիմանկարների գիրքը» հուշագրությունում // «Կանթեղ», Երևան, «Ասողիկ» հրատ., 2018, 4 (77), էջ 57-62:
5. Ազատության և խղճի հարցադրումները Լիլիան Հելլմանի պիեսներում // «Գրականագիտական հանդես», Երևան, «Արմավ» հրատ., 2019, ԺԸ, էջ 157-164:
6. Քլիֆորդ Օդեթսի («Ձախլիկին սպասելիս») և Լիլիան Հելլմանի («Երեխաների ժամը») պիեսների սոցիալ-հոգեբանական համատեքստը // Օտար լեզուները բարձրագույն դպրոցում (Գիտական հանդես), Երևան, ԵՊՀ հրատ., 2019, 1 (26), էջ 214-223:
7. Feminism in the context of the 20th century American literature: Lillian Hellman // Science and World international scientific journal 6(70), 2019, Vol. II, pp. 43-46, Volgograd, 2019.
8. Политический вкус Лилиан Хелмман // Научные вести международный научный журнал, 6 (11) 2019, стр. 5-10, Россия 2019.

Айтян Лусине Арамовна

Мотивы совести и ответственности в произведениях Лилиан Хеллман

Защита диссертации на соискание ученой степени кандидата филологических наук состоится 09.12.2020 года в 14:30 на заседании специализированного совета 066 ВАК («Зарубежная литература»), действующего в Ереванском государственном университете, по адресу г.Ереван, ул. А.Манукяна 1 (7-й корпус ЕГУ, факультет европейских языков и коммуникации, аудитория 422).

РЕЗЮМЕ

Диссертация посвящена анализу основной проблемы – мотивов совести и ответственности в произведениях известного американского драматурга, сценариста и автора ряда мемуаров 20-го века, Лилиан Хеллман (1905-1984).

Цели и задачи исследования

Предметом исследования является творчество Лилиан Хеллман, в частности, мотивы человеческой совести и ответственности в пьесах и мемуарах автора. Целью исследования является всесторонний анализ пьес и мемуаров Хеллман, выявление в них мотивов совести и ответственности, столкновения социально-психологических, политических и общественных проявлений личности.

Актуальность темы

Постановка эстетических вопросов и многие из представленных Лилиан Хеллман образов могут быть актуальными и поучительными и в наши дни для современного общества. Выдвинутые автором проблемы общечеловечны, а их решение и сегодня не потеряли свою актуальность и важность. Они прежде всего дают представление о сложных человеческих взаимоотношениях, о типах людей и в соответствии с этим – об их поведении в разных ситуациях.

Научная новизна диссертации

Исследователями, биографами, теоретиками и критиками жизни и литературного наследия Лилиан Хеллман написано много разных работ, содержащих заслуживающую внимания информацию о личной и творческой жизни драматурга, в контексте данной эпохи. Научной новизной представленной диссертации является то, что, с одной стороны, она является попыткой представления творчества Хеллман с точки зрения психологической драмы, а также тщательным анализом пьес американского драматурга, содержащих общечеловеческие темы, и преданные несправедливости вечные вызовы времени.

Методология работы

В основе исследования лежат методы анализа и типологии.

Структура диссертации

Диссертация состоит из введения, трех глав, выводов и библиографии.

Во Введении обоснованы выбор темы, ее актуальность и научная новизна, теоретическая и практическая значимость, обозначены цели и задачи исследования, представлены методологическая база работы и использованная литература.

В первой главе («Проявления общественно-политической мысли 20-го века в произведениях Л. Хеллман») раскрывается место и роль Лилиан Хеллман в американской литературе своего времени. Здесь обсуждаются политические взгляды писательницы, непосредственно повлиявшие на ее творчество. Во второй части данной главы показывается творческое развитие писательницы, представлены ее творческие периоды. С целью подчеркивания своеобразности творчества Хеллман творческое искусство писательницы анализируется в сопоставлении с другими ее современникам.

Во второй главе («Проблематика человека в пьесах Л. Хеллман») анализируются пьесы Л. Хеллман. Глава состоит из двух подглав, в первой из которых анализируются пьесы раннего периода, а именно: «Время детей», «Маленькие лисы», а во второй подглаве представлены пьесы Хеллман послевоенного периода: «Надзор над Реносом», «Осенний сад», «Игрушки на мансарде». Проводятся параллели как между отдельными пьесами писательницы, так и между периодами их создания. Обобщаются сходства и особенности, характерные для пьес Лилиан Хеллман. В целом в главе демонстрируется проблема совести и ответственности в современном американском обществе и отношение писательницы к данной проблеме.

В третьей главе («Драма экзистенциальных состояний личности в мемуарах Л. Хеллман») анализируются мемуары писательницы, в частности, «Неоконченная женщина», «Время негодяя», «Пентименто». Представлена связь между пьесами и мемуарами писательницы, а также разъясняются причины, заставившие Хеллман перейти на новый литературный жанр. В рамках главы предпринята попытка обращения к ряду таких вопросов как причины хеллманского перехода от пьесы к мемуарам, особенности и своеобразие мемуаров Лилиан Хеллман как жанра, преодоление уровня жанра писательницей и т.п.

В Выводах диссертации обобщается проведенное исследование и по пунктам выделяются его результаты и наблюдения.

В конце диссертации представлен полный список использованных источников и литературы.

HAYTYAN LUSINE ARAM

MOTIVES OF CONSCIOUS AND RESPONSIBILITY IN THE WORKS BY LILLIAN HELLMAN

The defense of the thesis will take place on 09.12.2020 at 14:30 at the HQC of RA's specialized council 066 of "Foreign Literature" in Yerevan State University (address: Yerevan, Aleq Manukyan st. 1, YSU, 7th building, Faculty of European Languages and Communication, room 422)

SUMMARY

The thesis is dedicated to the study of key issue- the motives of conscious and responsibility in the works of the 20th century American famous playwright, screenwriter and the author of a number of remarkable memoirs **Lillian Hellman** (1905-1984).

Objectives and tasks of the research

The ***theme*** of the study is L. Hellman's works and particularly the motives of human conscious and responsibility in the plays and memoirs of the author.

The ***objective*** of the study is to examine comprehensively the plays and memoirs by L. Hellman, to reveal the motives of conscious and responsibility and the manifestations of an individual's social-psychological, political and public conflicts in them.

Relevance of the topic

Many of the aesthetic problems and characters presented by Lillian Hellman are **up-to-date** and can also be instructive nowadays and for our society. The issues put forward by the writer are universal, and their original solutions haven't lost their freshness and significance even today: they, first of all, give notions about complicated relationships between people, human species and, consequently, about their behaviors in various situations.

Scientific novelty of the thesis

Researchers, biographers, theorists and critics have written extensive works dedicated to the life of and literary heritage of Lillian Hellman: they are containing interesting data about playwright's personal and creative life, are giving information about the events of the given century, as well as, are providing theoretical, literary, critical analysis and etc. The **scientific novelty** of the given thesis is that, on one hand, it is the first attempt to present to the Armenian reader comprehensively and in the framework of one research the works of the American playwright that contain universal eternal themes and are constant challenges to injustice and, on the other hand, the chosen theme- the issue of conscious and responsibility – even in the mentioned foreign publications is examined partially, in relevance to other issues and hasn't become a material for special study.

Methodology of the work

The thesis is based on analytical and typological ***methods.***

The structure of the thesis

The thesis consists of an introduction, three chapters, conclusion and bibliography.

In **introduction** the choice of the theme, its relevance and scientific novelty, theoretical and practical significance are substantiated, the objectives and tasks of the research are emphasized, the methodological basis and the literature related to the theme are revealed.

In first chapter entitled "The manifestations of twentieth century social-political mind in L, Hellman's works" the place and role of Lillian Hellman in the American literature of her time is revealed. Here the political viewpoints of the writer that directly influence her literature are discussed. In the second part of this chapter the creative development of the writer is discussed: the periods of her literary activity are presented. In order to indicate and reveal the uniqueness of Hellman's art the author's creative art is examined in comparison with other writers of her time.

In second chapter ("The problem of a man in L. Hellman's plays") the plays by L. Hellman are studied. The chapter is divided into two subchapters: the first one examines the writer's early plays – "The Children's Hour", "The Little Foxes", while the second subchapter reveals Hellman's postwar plays ("Watch on Rhine", "The Autumn Garden", "Toys in the Attic") and their uniqueness. The parallels between the writer's works, as well, as, sub-stages of their creation are carried out. The similarities and differences typical for Lillian Hellman's plays are summarized. The whole chapter presents the issue of conscious and responsibility in modern American society and the author's attitude to them.

In third chapter entitled "The existential state of an individual in L. Hellman's memoirs" examines the memoirs of the writer, particularly "An Unfinished Woman", "Scoundrel Time" and "Pentimento". The bond between the plays and memoirs of the writer is pointed out and the reasons that made Hellman to turn to a new literary genre are also clarified. Here are also presented the peculiarities and uniqueness of Lillian Hellman's memoirs as a genre, the level of mastery of the genre by the writer and so on.

Conclusion summarizes the carried out research and point by point singles out its results and observations.

In the end of the thesis the whole **list** of sources and **bibliography** is presented.